Աշխատանքի ծածկագիր 7911

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի

մասնակցությամբ անդամներ՝

Հ.Պետրոսյանի

Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ, 19-րդ, 24-րդ, 26-րդ, 34-րդ, 27-րդ, 28-րդ, 22-րդ և քրեական իրավունք բաժնի 40-րդ, 19-րդ, 24-րդ հարցերը:

Քրեական դատավարության բաժին

Հարց 3

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում օրենսգրքով սահմանված պահանջներին*: Քանի որ մեղադրական եզրակացութունը դատախազին վերադարձնելու դատավարական ընթացակարգ

չկա, հետևաբար Հանձնաժողովը փաստում է, որ նշված առաջադրանքում ճիշտ պատասխանը բացակայում է, այդ իսկ պատճառով ճիշտ պատասխանն է <<դ>> տարբերակը:

Հարց 6

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը այն է՝ *այո, քանի որ դատավորը կաշկանդված չէ գործի մինչդատական վարույթում արված եզրահանգումներով,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ *ոչ, քանի որ դատավորն ունի կանխակալ կարծիք դատական քննության առարկայի (մեղադրանքի) վերաբերյալ,* քանի որ տվյալ դեպքում դատավորը բողոքի քննության արդյունքում անդրադարձել է անձին վերագրվող մեղադրանքի՝ խարդախության հանցակազմի հատկանիշներին, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:

Հարց 19

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը այն է՝ *ոչ, քանի որ օրենսդիրը հստակ թվարկել է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման դեմ բողոք ներկայացնող անձանց, որոնց շարքում վկան նախատեսված չէ:* Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեկուզև օրենսդիրը հստակ թվարկել է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման դեմ բողոք ներկայացնող անձանց, այնուամենայնիվ, եթե այդ որոշմամբ խախտվել են վկայի իրավունքներն ու օրինական շահերը, ապա նա իրավունք ունի բողոքարկելու քննիչի կողմից քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:

Հարց 24

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ *այո, եթե այդ գույքի վրա կարող է տարածվել բռնագանձում,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը գ-ն է, այն է՝ *այո, եթե կան ապացույցների բավարար համակցություն առ այն, որ մյուս ամուսինը տեղեկացված է եղել, որ համատեղ սեփականությունն ավելացվել է հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին, սակայն բացառապես այդ ավելացված մասի վրա:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջադրանքի ճիշտ տարբերակը հարցի ամբողջական և լիարժեք պատասխան է, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:

Հարց 26

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *երբ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատարանը կայացնում է, երբ մեղադրական եզրակացության մեջ շարադրված չեն մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները, այսինքն առաջադրաքում նշված <<գ>> տարբերակը, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:

Հարց 34

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *եթե դատական քննության ընթացքում հայտնվում է ամբաստանյալը և ներկայանում դատարան:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցարի բոլոր տարբերակները ճիշտ են, այսինքն ճիշտ պատասխանը <<դ>> կետն է, այդ իսկ պատճառով միայն ճիշտ տարբերակներից մեկը նշելու պարագայում չի կարող հավակնորդի կողմից նշված տարբերակը որպես լիարժեք և ընդունելի համարվել:

Հարց 27

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ *քննչական բաժնի պետը նման ցուցում տալու լիազորություն չունի*, մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը գ-ն է, այն է՝ *բողոքարկել դատախազին՝ կասեցնելով դրա կատարումը:* Հանձանժողովը փաստում է, որ պայմանավորված հենց այն հանգամանքով, որ քննչական բաժնի պետը նման ցուցում տալու լիազորություն չունի, քննիչը պետք է կասեցնի դրա կատարումը և այդ հիմքով էլ բողոքարկի դատախազին:

Հարց 28

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ *անհրաժեշտություն է առաջացել պարզելու մահվան*

պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից երևում է, որ *քննիչը համաձայն չլինելով փորձագետի եզրակացության հետ՝ վերջինի ոչ լրիվ լինելու պատճառաբանությամբ* ***կարող է*** *նշանակել լրացուցիչ փորձաքննություն,* հետևաբար <<կարող է>> **եզրույթը չի կարող համարվել <<պարտադիր>>:** Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 22

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ *տեղանքի և շենքի զննության:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղանքի և շենքի զննություն քննչական գործողության արդյունքները նույնպես մտցվում են դատական նիստի արձանագրության մեջ, այդ իսկ պատճառով հարցադրման մեջ առկա կետերից և ոչ մեկը չի կարող համարվել ճիշտ պատասխան: Հետևաբար ճիշտ պատասխանը <<դ>> կետն է, այն է՝ *ճիշտ պատասխանը բացակայում է:*

Հարց 8

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ *անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք և դրժողը հաշվվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ,* մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը գ-ն է, այն է՝ *անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք, դրժողը հաշվվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ և առկա է հարուցված քրեական գործ:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<ա>> տարբերակում բացակայում է քրեական գործի հարուցված լինելու հանգամանքը, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կաող համարվել լիարժեք և ընդունելի:

Հարց 11

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ *համաներման հիմքով որոշում է կայացվել նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին,* և քանի որ հարցադրման մեջ

նշված բոլոր դեպքերում մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման, այդ իսկ պատճառով ճիշտ պատասխանն է <<դ>> կետը, այն է՝ *<<ա>>, <<բ>> և <<գ>> կետերում նշված դեպքերում:*

<u>Քրեական իրավունքի բաժին</u>

Հարց 40

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ *նշանակի ազատազրկում, քանի որ առկա է կալանք պատժատեսակը նշանակելու արգելք:* ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն *<<Դատավճիռը կայացնելու պահին (...) խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ կարող է նշանակվել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված ամենամեղմ պատժատեսակը կալանքն է, և նախատեսված մյուս պատժատեսակների նշանակումը դատարանը գտնում է ոչ համաչափ (...)* >>, հետևաբար վերոգրյալից ելնելով և հաշվի առնելով հարցադրման մեջ առկա հանգամանքները, հավականորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի, քանի որ ճիշտ պատասխանն է <<բ>> կետը, այն է՝ *նշանակի օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված)՝ խնամքին երեք տարեկան երեխա գտնվելու հանգամանքի հիման վրա:*

Հարց 19

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից գ/ տարբերակը այն է՝ *անձի գրպանից կատարված գողությունը:* Հաշվի առնելով հարցադրման մեջ առկա փաստական հանգամանքները Կ-ի արաքը պետ է որակել՝ *անձի գրպանից կատարված գողության փորձ,* այսինքն ճիշտ տարբերակն է՝ <<բ>> կետը:

Հարց 24

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը այն է՝ *առողջությանը ծանր վնաս պատճառելը և մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ՝ հանցանքների համակցությամբ:* Հարցի մեջ առկա փաստական հանգամանքներից ելնելով ակնհայտ է, որ առկա չէ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում, այլ առկա է երկու առանձին դրվագ՝ առողջությանը ծանր վնաս պատճառել: Հետևաբար հաշվի առնելով վերը նշված

հանգամանքները Դ-ի արաքը պետ է որակել՝ *երկու դրվագ՝ առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ հանցանքների համակցությամբ,* այսինքն ճիշտ տարբերակն է՝ <<գ>> կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 7911 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 28-րդ հարցերի պատասխանը գնահատել 1 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ